

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ

Ք.Երևան

6 մայիսի 2011թ.

Ժ.11.00

Մասնակցում էին՝ Երևանի ավագանու 43 անդամներ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Առաքելյանը, քաղաքապետի գլխավոր խորհրդական Դ. Մելքոնյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վ. Ստեփանյանը, քաղաքապետի մամուլ քարտուղար Շ. Սարգսյանը, աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը, աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը, աշխատակազմի առողջապահության վարչության պետ Ա. Ուլիխանյանը, աշխատակազմի կազմակերպական վարչության պետ Գ. Բաղդասարյանը, աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ. Գևորգյանը, աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Ա. Գևորգյանը:

Նիստին ներկա էին հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Օրակարգի նախագծի հաստատում:
2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ս որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Մի շարք բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին:
4. Մի շարք ոչ առևտրային կազմակերպություններ լուծարելու մասին:
5. Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին:
6. Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 18-ի N1390-Ս և N1391-Ս որոշումներին համաձայնություն տալու մասին:
7. Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի N1465-Ս որոշմանը համաձայնություն տալու մասին:
8. Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի N1462-Ս որոշմանը համաձայնություն տալու մասին:
9. Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի N1452-Ս որոշմանը համաձայնություն տալու մասին:
10. Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
11. Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի N1463-Ս որոշմանը համաձայնություն տալու մասին:
12. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
13. Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:
14. Երևանի Փ. Բուզանդի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
15. Երևանի Մ. Բաղրամյանի պողոտա 1-ին փակուղի հ.14 շենքի հ.162 հասցեում գտնվող 136.1 քմ տարածքը անհատույց օգտագործման իրավունքով նոտարներ Ալվարդ Մելքոնյանին, Էմմա Շաբոյանին և Նունե Սարգսյանին տրամադրելու մասին:
16. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ս որոշման հավելվածներում փոփոխություն կատարելու մասին:

17. «Թիվ 4 բուժասանմաս» և «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին:

18. «Եվրոսիթիս» ասոցիացիային անդամակցելու մասին:

Հիմք ընդունելով Երևանի ավագանու Ֆինանսավարկային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ն.Նահապետյանի 04.05.2011թ. հ.59/0088 եզրակացությունը՝ Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը առաջարկեց «Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 18-ի N1390-Ա և N1391-Ա որոշումներին համաձայնություն տալու մասին» Երևանի ավագանու իրավական ակտի նախագիծը հանել օրակարգից /կցվում է/:

**1. ԼՄԵՑԻՆ** – Օրակարգի հաստատման մասին:

**ՈՐՈՇՎԵՑ** – Հաստատել Երևան քաղաքի ավագանու հինգերորդ նստաշրջանի չորրորդ նիստի օրակարգը /կցվում է/:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
 դեմ – 0  
 ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**2. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի N3-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հուլիսի 6-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկ ստեղծելու, Երևանի քաղաքապետարանի և Երևանի վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կանոնադրությունները, դրանց կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատելու մասին» N3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Որոշման N 3 հավելվածում՝

ա.«Լ.Կառուցվածքային ստորաբաժանումներ» գլխի «1. Վարչություններ» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25-րդ կետով.

«25) Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն»,

2) Որոշման N 4 հավելվածում՝

ա. «Լ. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն» գլխով.

<b>Տնտեսագիտական վերլուծության, պլանավորման և մեթոդաբանության վարչություն</b>					
	վարչության պետ	1	270,0		270,0
	գործավար	1	120,0		120,0
-	<b>Առևտրային կազմակերպությունների տնտեսական արդյունավետության վերլուծության և պլանավորման բաժին</b>				
	բաժնի պետ	1	225,0		225,0
	գլխավոր մասնագետ	2	170,0		340,0
	առաջատար մասնագետ	1	165,0		165,0
-	<b>Օրագրերի ֆինանսատնտեսագիտական հիմնավորումների և աշխատանքների նորմավորման բաժին</b>				
	բաժնի պետ	1	225,0		225,0

գլխավոր մասնագետ	1	170,0		170,0
առաջատար մասնագետ	1	165,0		165,0
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>9</b>			<b>1680</b>

բ. «Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն» գլխի 2-րդ կետում «1» և 6-րդ սյունակի «250,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «2» և «500,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «24» և «4365,0» թվերը փոխարինել «25» և «5615,0» թվերով:

գ. «Ի.Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ֆինանսական վարչություն» գլխի 8-րդ կետում «2» և «340,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «1» և «170,0» թվերով և այդ կապակցությամբ «Ընդամենը» տողի «33» և «6010,0» թվերը փոխարինել «32» և «5840,0» թվերով:

դ. «Ի. Կառուցվածքային ստորաբաժանումներ» բաժնի «Ամբողջը՝ Երևանի քաղաքապետարան» տողում «405» և «46069,5» թվերը փոխարինել համապատասխանաբար «414» և «77829,5» թվերով:

ե. «Ամբողջը» տողում «1952» և «310111,59» թվերը փոխարինել համապատասխանաբար «1961» և «311871,59» թվերով:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
 դեմ – 0  
 ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**3. ԼՍԵՑԻՆ** - Մի շարք բաժնետիրական ընկերություններ լուծարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցության» խմբակցության անդամ Հրաչ Պողոսյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևան համայնքի ենթակայության մի շարք բաժնետիրական ընկերություններ (այսուհետ՝ Ընկերություններ) համաձայն հավելվածի /կցվում է/:

2. Երևանի Արաբկիր, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ղեկավարներին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողովներ:

3. Լուծարման հանձնաժողովներին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Ընկերությունների լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
 դեմ – 0  
 ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**4. ԼՍԵՑԻՆ** - Մի շարք ոչ առևտրային կազմակերպություններ լուծարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել Երևան համայնքի ենթակայության մի շարք համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ (այսուհետ՝ Կազմակերպություններ) համաձայն հավելվածի /կցվում է/:

2. Երևանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողովներ:

3. Լուծարման հանձնաժողովներին՝ 3-ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ավարտել Կազմակերպությունների լուծարման գործընթացը և 20-օրյա ժամկետում լուծարումից հետո մնացած գույքը հանձնել «Երևանի

քաղաքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի տնօրինությանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**5. ԼՍԵՑԻՆ** - Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանել 15000 ՀՀ դրամ:

2. Երևանի քաղաքապետին սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացնել որոշման ընդունմամբ պայմանավորված Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեում փոփոխություն կատարելու առաջարկ:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**6. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի հ.1465-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Արա Մինասյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի ապրիլի 21-ի N1657-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1465-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**7. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի N1462-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ. Նիկոյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Լևոն Իգիթյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N983-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1462-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**8. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի հ.1452-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մայիսի 26-ի N2066-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1452-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**9. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N169-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** - Երևանի ավագանու «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Պողոս Փլավյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց Երևանի քաղաքապետ Կ.Կարապետյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի 2011 թվականի բյուջեի մասին» N 169-Ն որոշմամբ հաստատված NN 2, 3, 6 և 7 հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման համապատասխանաբար NN 1, 2, 3, և 4 հավելվածների /կցվում է/:

2. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևանի քաղաքապետարանի կարիքների համար չորրորդ աստիճանի վթարային շենքերի քանդման հետևանքով բնակատարածություններից զրկված բնակիչներին փոխհատուցում տալու նպատակով բնակարանների ձեռքբերման պայմանագրերով նախատեսել, որ բնակարանները ողջ ծավալով ձեռք են բերվում 2011 թվականին՝ պայմանով, որ 2011 թվականին վճարվում է գնվելիք բնակարանների արժեքի մինչև 50 %-ը, իսկ մնացած մասը վճարվում է 2012 թվականին:

3. Երևանի քաղաքապետին՝ Երևանի քաղաքի 2012 թվականի բյուջեի նախագծով նախատեսել սույն որոշման 2-րդ կետով նախատեսված 2012 թվականի վճարման ենթակա գումարները:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**10. ԼՍԵՑԻՆ** - Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի N1463-Ա որոշմանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Վ.Նիկոյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ Երևանի քաղաքապետի 2011 թվականի ապրիլի 20-ի «Երևանի քաղաքապետի 2010 թվականի մարտի 3-ի N983-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N1463-Ա որոշմանը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**11. ԼՍԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի N55-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010 թվականի ծրագրի վերաբերյալ» N55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 4-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6-րդ ենթակետով.

«6) 1988-1992 թվականներին Ադրբեջանի Հանրապետությունից բռնագաղթված և Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած այն անձանց, ովքեր բնակարաններում, բնակելի տներում և բնակելի տարածքներում բնակվում և հաշվառված են (այդ թվում փաստացի) 10 տարվանից ավելի»:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**12.. ԼՍԵՑԻՆ** - Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Տալ համաձայնություն՝

1) սեփականության իրավունքով <<Սահակյանշին>> ՓԲԸ-ին պատկանող Երևանի Բաբաջանյան փողոցի հ.3/3 հասցեում գտնվող 4300.0քմ մակերեսով հողամասի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.11.2007թ. հ.2352643 վկայական) 177.46քմ և 38.74քմ՝ ընդհանուր 216.2քմ մակերեսով հատվածը կից տարածքից, Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող 177.46քմ և 38.74քմ, ընդհանուր 216.2քմ մակերեսով հողամասի,

2) սեփականության իրավունքով Սվետլանա Մարգարյանին պատկանող Մոլդովական փողոցի հ.51/2 հասցեի տնամերձ հողամասի հյուսիսային սահմանագծում գտնվող 22.8քմ մակերեսով հողամասը (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 05.08.2008թ. հ.2488892 վկայական) Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Մոլդովական փողոցի հ.51/2 հասցեի արևելյան հատվածում գտնվող 22.8քմ մակերեսով հողամասի,

3) սեփականության իրավունքով <<Դավա Ինվեստ>> ՄՊԸ-ին պատկանող Երևանի Ծիծեռնակաբերդի խճուղի 2 հասցեի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 11.01.2010թ. հ.2704258 վկայական) 120000.0քմ մակերեսով հողամասից 853.5քմ մակերեսով հողամասը, Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հարակից 853.5քմ մակերեսով հողամասի հետ փոխանակելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

**13. ԼՍԵՑԻՆ** - Երևանի Փ. Բուզանդի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Ա. Ամյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Թույլատրել Երևանի քաղաքապետին.

1) Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ.Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 217.6քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը տրամադրել «Ռադիո Հայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

2) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 107.7քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով մինչև 2012 թվականի հուլիսի 1-ը տրամադրել «Առկա» լրատվական գործակալություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը:

3) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 3-րդ հարկի 498.7քմ և 5-րդ հարկի 74.8քմ և մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով

տրամադրել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի կենսառեսուրսների կառավարման գործակալությանը:

4) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 33.5քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը:

5) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել «Ռոսիա» հասարակական կազմակերպությանը:

6) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել «Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» հասարակական կազմակերպությանը:

7) Փ. Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 4-րդ հարկի 36.9քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով 2 տարի ժամկետով տրամադրել «Հայելի ակումբ» ժողովրդական աջակցության հասարակական կազմակերպությանը:

2. Սույն որոշման 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի հիման վրա ««Ռադիո Հայ» և «Առկա» լրատվական գործակալություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ անհատույց օգտագործման իրավունքով տարածքներ տրամադրելու մասին պայմանագրերը կնքել՝ նույն շենքում ընկերությունների կողմից նախկինում զբաղեցրած տարածքներն ազատելուց և դրանց նկատմամբ իրավունքները դադարելուց հետո:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

**14. ԼՄԵՑԻՆ** - Երևանի Մ. Բաղրամյանի պողոտա 1-ին փակուղի հ.14 շենքի հ.162 հասցեում գտնվող 136.1 քմ տարածքը անհատույց օգտագործման իրավունքով նոտարներ Ալվարդ Մելքոնյանին, Էմմա Շաբոյանին և Նունե Սարգսյանին տրամադրելու մասին:

Քաղաքապետ Կ. Կարապետյանը առաջարկեց հարցը հանել օրակարգից:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

**15. ԼՄԵՑԻՆ** - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի N161-Ա որոշման հավելվածներում փոփոխություն կատարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ջ. Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Երևան քաղաքի ավագանու 2010 թվականի նոյեմբերի 26-ի «Երևանի վարչական շրջանների ղեկավարներին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների անհատական կազմերը հաստատելու մասին» N161-Ա որոշման 1-ին կետով հաստատված NN1-12 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ /համաձայն NN1-12 հավելվածների, կցվում է//:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

Որոշումն ընդունվեց միաձայն

**16. ԼՍԵՑԻՆ** - «Թիվ 4 բուժսանմաս» և «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունները միացման ձևով վերակազմակերպելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի առողջապահության վարչության պետ Ա. Ուլիխանյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամներ Լևոն Իգիթյանը, Արա Մինասյանը և «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամներ Գուրգեն Գասպարյանը և Պողոս Փլավչյանը:

Հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Զ. Առաքելյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերությունը միացման ձևով վերակազմակերպել՝ միացնելով «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերությունը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սահմանված կարգին համապատասխան ապահովել «Թիվ 4 բուժսանմաս» փակ բաժնետիրական ընկերության միացման պայմանագրի, փոխանցման ակտի կազմման և հաստատման աշխատանքների կատարումը և նախապատրաստել «Թիվ 13 պոլիկլինիկա» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության, կառուցվածքի, աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի նախագծերը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն ու հաստատմանը ներկայացնելու համար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 35  
դեմ – 7  
ձեռնպահ – 1

**Որոշումն ընդունվեց ձայների մեծամասնությամբ**

**17. ԼՍԵՑԻՆ** - «Եվրոսիթիս» ասոցիացիային անդամակցելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի արտաքին կապերի վարչության պետ Դ. Գևորգյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑ** – Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Միքայել Դովլաթյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - 1. Համաձայնություն տալ անդամակցելու «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային:

2. Երևան համայնքի բյուջեում նախատեսել «ԵՎՐՈՍԻԹԻՍ» ասոցիացիային անդամության վճար:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ** – կողմ – 43  
դեմ – 0  
ձեռնպահ – 0

**Որոշումն ընդունվեց միաձայն**

Երևանի քաղաքապետ Կ. Կարապետյանն առաջարկեց Երևանի ավագանու հերթական նիստը գումարել 2011 թվականի հունիսի 24-ին ժամը 11.00-ին:

Առաջարկն ընդունվեց միաձայն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**